

Շարուած, աղօթքներ և մաղթանքներ
կանէ Հրէից քրիստոնէական դարձին
համար:

ԵՐԿԱԹՈՒՂԻ ՅՈՊԳԷՆ ՅԵՐՈՒՍԱԴԷՄ

Երկու տարի առաջ լուր տարած
ուեցաւ, որ Երուսաղէմի համար եր
կաթուղի պիտի շինուի: Այս մասին
յատուկ երկրաչափներ եկան և սկսան
մանրամասն նկատողութեան առնուլ
եւ ամենայն պարագայիւք ծրագիր
պատրաստել:

Բոլոր ժողովուրդն յանշափա ու
բախտացաւ և որ աւուր անհամբեր կը
տպաէր կատարումն տեսնել, որով
անշուշտ Պաղէստին քաղաքակրթու
թեան ծանապարհի մէջ պիտի մտնէր
և մեծամեծ գիւրութիւններ պիտի ու
նենար յառաջագիւնութեւ: Մանաւոր
ուելի ուրախալին այն էր, որ խօսք կար
թէ՝ երկաթուղւոյ պատճառաւ Յուդ
պէ նաւահանգիստն և ու պիտի շինուի:

Սակայն տարիներ անցան և տակա
ւին սկզբնաւորութիւնն անգամ չը
տեսնուեցաւ իցաւ որտի ամենեցուն:

Թէեւ խկապէս յայտնի չէ թէ ինչ
պատճառներով յետ մնաց այս բարի
գիտաւորութեան կատարումն: Միայն
բնդհանուր համարումն այս է, որ այն
երկաթուղւոյ շինութիւնն մեծ պա
տիւ կարող է բերել Օսմանեան Տէ
րութեան, փասն զի Թուրքիոյ Այսու
բութեան մէջ Պաղէստին այն երկիրն
կամ Նահանգն է, ուր ամենէն աւելի
Նւրոպացիք և Ամերիկացիք կը յաճա
խեն, և հետեւապէս, Թուրքիոյ վի
ճակն Պաղէստինի վիճակէն կը կշռեն:

Թէ իւր փառաց և թէ՛ ժողովրդի
բարեկեցութեան համար իրատ փա
փաքելն էր որ Տէրութիւնն չը յետա
ձրդէր արդէն իսկ հրատարակուած
այն բարի գիտաւորութիւնն:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆԻՔ

Պաղէստինի կառավարիչ Քեամիլ
փաշան, որ Կ. Պօլիս կոչուած էր, վե
րագործաւ իբրաղաքս իւր պաշտօնն
չարունակելու եւ Պատրիարքաց ու
Հիւպատոսաց այցելութիւններն ըն
դունելէն զինի՝ ինքն եւս փոխադար
ձաբար այց ելաւ ամենուն:

Տեսնենք թէ ինչ վախճան պիտի
ունենան Ս. Լ. Թուոյս իրաւանց խըն
դիրներն, որոց համար շարունակ կը
տողնապիմք և դարման մի գտնելու
համար յատկապէս Պօլիս զրկուեցաւ,
փոխանորդութեան առ ժամանակեաց
պաշտօնիւ, Վերապատիւ Սիմէօն եւ
պիսկոպոսն, որ քաջահմուտ է թէ՛
հակառակորդաց կողմէն եղած դար
ձաւածներուն և թէ՛ Ս. Լ. Թուոյս դա
րեւոր արտօնութեանց և Տէրութե
նէն շորհուած Հրովարտական պա
րունակութեանն:

— Լատինաց Քրանչիսկեան Սի
աբանութիւնն, որ Ս. Լ. Երկրին մէջ
Լատինաց սեպհակոստութեանց և ի
րաւանցանքնդմիջական հակողութեան
պաշտօնն կը վարէ, բողոքովն անկախ
ի Պատրիարքէն, նոր Տեսուչ և Նա
խագահ մի ունեցաւ ներկայ առայս
մէջ, որ ընդունուեցաւ բազմախու
սըն գիմաւորութեամբ և մեծ շքով:
Այն Տեսուչն, թէեւ նոր կը գոյ Ի
տալիայէն, բայց առաջ պաշտօններ
վարած է արդէն Պաղէստինի մէջ և
քաջամանօթ է երկրին եւ իւր Վա
նուց Սիաբանութեանն:

— Պաղէստինի մէջ ներկայ տարւոյս
բերքերն առատ են. ժողովուրդն գոհ
է իւր վիճակէն: Դնձրեւներն աակա
ւին սկսուած չ'են, բայց ցողն և տա
րափն անընդհատ կ'իջանեն եւ անձ
րեւներն իսկ թերեւս չուտով սկսին: